



THIS PROJECT IS FUNDED BY THE EUROPEAN UNION



ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑ ՄԻԳՐԱՅԻԱ և ԶԱՐԳԱՑՈՒՄ Արթուրս Ադվերան Ռեգորթ, Հայաստան 18-20 Հուլիս, 2019

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավելի քան տասնյակ տարիներ Հայաստանում իրականացվում են աշխատանքներ՝ ուղղված միգրացիոն քաղաքականության մշակմանը, այդ թվում՝ միգրացիայի կառավարման ընդհանուր քաղաքականություն, ապաստանի վերաբերյալ քաղաքականություն և ինտեգրման գործընթացները դյուրացնող քաղաքականություն: Գործնական քայլերից մեկն էլ եղել Միրիայից տեղահանված հայկական ծագում ունեցող հազարավոր փախստականների ինտեգրումը Հայաստանում:

ԵՊՀ-ի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի համար վերջերս մշակվել է ուսումնական պլան, իսկ ներկայումս աշխատանքներ են իրականացվում ժուռնալիստիկայի, իրավաբանական և տնտեսագիտական ֆակուլտետների համար ուսումնական պլանների մշակման ուղղությամբ: Միգրացիայի ոլորտում ուսումնական պլանի մշակման, ԵՊՀ ուսանողներին և դասախոսական կազմին նոր գիտելիքների տրամադրման, ինչպես նաև միգրացիոն թեմաների և նոր ուսումնական պլանի նկատմամբ հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով՝ Հայաստանում Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի գրասենյակը, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Հայաստանում միգրացիայի և սահմանների կառավարման ուղղությամբ աջակցություն» ծրագրի շրջանակներում կազմակերպում է «Միգրացիա և զարգացում» ամառային դպրոցը: Դպրոցի հիմնական նպատակն է ուսանողներին և դասախոսներին ներկայացնել ընտրված թեմաների վերաբերյալ միջազգային փորձը: Թեմաներն են՝ միգրացիա, զարգացում, մամուլի դերը միգրացիայի ընկալման ոլորտում, և այլն:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Միգրացիայի և զարգացման խնդիրները սերտորեն փոխկապակցված են՝ միգրացիան ընկալվում է որպես զարգացման հիմնական գործիք, քանի որ այն ունի շոշափելի (կապիտալ, ներդրումներ, առևտուր) և ոչ-շոշափելի (հմտություններ, մշակույթ, գաղափարներ) արդյունք: Ամառային դպրոցը նվիրվում է «Միգրացիա և զարգացում» թեմային և իր մեջ ներառում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝

- միգրացիայի և զարգացման ոլորտում համագործակցության համար գոյություն ունեցող շրջանակներ և գործնական քայլեր
- զարգացող պետություններում միգրացիայի տնտեսական դրդապատճառները և հետևանքները. միգրացիա, զարգացում և դրամական փոխանցումներ
- միգրանտների վերադարձը և վերաինտեգրումը հայրենիքում
- ինչպե՞ս է մամուլը ձևավորում միգրացիայի նկատմամբ հանրային կարծիքը

- ովքե՞ր և ինչպե՞ս են ձևավորում միգրացիոն գործընթացները
- զարգացման արդյունքների գնահատումը և այլն:

ԴԱՄԱԽՈՍՆԵՐ

Պրն Արմեն Ղազարյան, ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պետ

Պրն Գագիկ Եգանյան, ԵՊՀ և Սլավոնական համալսարանի դասախոս, պրոֆեսոր

Պրն Աթիլա Մելեխ, Բուդապեշտի Կորվինուս համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական քաղաքականության ինստիտուտի դոցենտ

Տկն Մարգիտ Ֆեյշմիդտ, Հունգարիայի գիտությունների ակադեմիայի սոցիալական գիտությունների գիտական կենտրոնի գիտնական

Տկն Մագդա Աբու-Ֆադիլ, Մեդիա առանց սահմանների կազմակերպության տնօրեն, Լիբանան, մեդիայի և հաղորդակցման հարցերով փորձագետ

Պրն Վիկտոր Լուտենկո, միգրացիայի և սփյուռքի հարցերով փորձագետ (ավելի քան 14 տարվա փորձառություն)։ աշխատել է Քիշնևի քաղաքապետարանում, Մոլդովայում եվրոպական քաղաքականությունների և բարեփոխումների ինստիտուտում, կառավարությունում

Պրն Պարույր Աբրահամյան, տնտեսագետ, կայուն զարգացման գծով փորձագետ

ՎԱՅՐ և ԱՄՍԱԹԻՎ

Ամառային դպրոցը տեղի է ունենալու հուլիսի 18-20-ը, Արթուրս Աղվերան Ռեզորթում:

ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ

Մասնակցության համար հայտ կարող են ներկայացնել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում ընդգրկված ուսանողները, ինչպես նաև միգրացիոն խնդիրներով հետաքրքրված դասախոսները: Մասնակիցների թիվը սահմանափակ է, կընտրվեն առավելագույնը 25 մասնակից: Մասնակիցները պետք է ներկայումս լինեն ուսանողներ, կամ ընդգրկված լինեն գիտական աշխատանքներում, և/կամ ունենան մասնագիտական փորձ միգրացիայի կամ միգրացիոն խնդիրներին առնչվող ոլորտներում: Ամառային դպրոցի ծրագրի ուսումնական մասի ամբողջ ընթացքին մասնկացությունը պարտադիր է՝ առանց որևէ բացառությունների:

ՎՃԱՐՆԵՐ, ՏՐԱՆՍՊՈՐՏ և ԿԱՑԱՐԱՆ

Ամառային դպրոցը անվճար է մասնակիցների համար: Բոլոր ծախսերը վճարվում են Հայաստանում ՄՔՄՄԿ գրասենյակի կողմից: Տրամադրվող կացարանի հետ կապված փոփոխություններ չեն կարող կատարվել:

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Ամառային դպրոցի մասնակցության հայտերը ընդունվում են մինչև հուլիսի 1-ը, 2019թ: Միայն լիարժեք լրացված հայտերն են ենթակա դիտարկման, որտեղ նշված կլինեն մասնակցի անունը, ազգանունը, կոնտակտային տվյալները, ինչպես նաև դպրոցին մասնակցելու նպատակների մասին հակիրճ նկարագրությունը: Հայտի ձևը կարող եք ներբեռնել www.mibma.eu կայքից և լրացված հայտերը ուղարկել mibma@icmpd.org կամ inna.galoyan@icmpd.org հասցեներով:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 010 520388 հեռախոսահամարով կամ ուղարկել էլեկտրոնային նամակ inna.galoyan@icmpd.org հասցեին: